Վեհափառ Հայրապետի հեռագիրը Տ. Փոխարքային

ԹԻՖԼԻՍ

Նորին Գայծառափայլութեան Փոխարքային Կովկասու.

Հայ ազգի բոլոր խաւերի ներկայացուցիչները, որոնք ժողովուել են հայ գրերի 1500–ամեակի յոբելենական հանդէսին, խնդրեցին Ինձ արտայայտել Ձերդ Գայծառափայլութեան իրենց խորին յարգանաց զգացումները և բարեմաղթութիւնները Ձեր կատարեալ առողջութեան համար, որպէս զի կարող լինէք այսուհետև ևս երկիրը վարել խաղաղ կուլտուրական զարգացման շաւղով։

Ցայտնում եմ նաև, որ Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր մատուցի հայ ժողովրդի ներկայացուցիչների հաւատարիմ զգացումները։

ԳԷՈՐԳ Կաթողիկոս Ամենայն Հայոց

14 հոկտեմբերի 1913 ամի,
Ս. Էջմիածին։

Տ. Փոխարքայից ստացուել է հետևեալ հեռագիրն Ռոստովից (Թիֆլիս վերադառնալիս) հոկտեմբերի 15-ին.

ԷՋՄԻԱԾԻՆ

Նորին Սրբութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին

Շնորհաւորութիւնս եմ մատուցանում Ձերդ Սրբութեան հայ գրերի 1500–ամեակի տօնի առթիւ և խնդրում եմ Ձեզ և Էջմիածնում գտնուող ժողովրդական ներկայացուցիչներին ընդունել Իմ խորին շնորհակալիքն այն բարի վերաբերմունքի համար, որ ունիք դէպի ինձ։ Սրտանց զգացուած եմ։

Կոմս Վորոնցով։